## ՀՀ Սյունիքի մարզպետ Վ. Հակոբյանի շնորհավորական ուղերձը վերջին զանգի առիթով

Սիրելի՛ շրջանավարտներ,

Շնորհավորում եմ բոլորիդ դպրոցական ուսումնառությունն ավարտելու տոնական առիթով: Այսօր դուք նոր էջ եք բացում ձեր կյանքում, իսկ  հարազատ կրթօջախում հնչող վերջին զանգն ուղեկցելու է ձեզ միշտ՝ հաճելի ու բարի հիշողություններ արթնացնելով ձեր հոգում: Այս տոնական օրը նաև խորհրդանիշ է նոր սկզբի և հեռանկարների, հասուն և պատասխանատու որոշումների:

Հանդիսավոր այս օրը, երբ բոլորը շնորհավորում են ձեզ, համոզված եմ, դուք էլ շնորհակալության, գնահատանքի ու երախտիքի խոսք եք ուղղում ձեր ուսուցիչներին՝ տանելով ձեզ հետ նրանց բարի խորհուրդներն ու պատգամները:

Վստահ եմ, որ դուք արժանավոր քաղաքացիներ եք և ձեր մարդկային որակներով, ձեռքբերումներով ու հաջողություններով նպաստելու և ձեր ավանդն եք բերելու մեր պետության հետագա զարգացմանն ու հզորացմանը:

Թող  ձեզնից յուրաքանչյուրը գտնի ինքնահաստատման ճշմարիտ ու արժանապատիվ ուղին և թող իրականություն դառնան ձեր բոլոր ձգտումներն ու նվիրական իղձերը :

Երջանկություն և հաջողություններ ձեզ՝ սիրելի՛  շրջանավարտներ:

**ՀՀ Սյունիքի մարզպետ**  **Վ. Հակոբյան**

23 մայիսի 2014թ.